Արմավիրի մարզի
Ոսկեհատ համայնքի
ղեկավարի 2011թվականի
առաջին կիսամյակի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի բյուջեն կատարվել է 95,5 % - ով
ա) Հողի հարկը –89,8 % -ով
բ) Գույքահարկը – 65,4 % -ով
գ) Վարձակալական հ/հ - 27,4% -ով
դ)Սեփական եկամուտներ – 80,9 % -ով

2. Ներքոհիշյալ բոլոր աշխատանքները լսվել , քննարկվել և հաստատվել է ավագանու 8 նիստերի ընթացքում :

3.Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները , որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ: Դպրոցահասակ 16 երեխաների համար կատարվել է դպրոց ճանապարհման հանդես :

5. Կիսամյակի ընթացքում վթարվել են 5 փողոցների խմելու ջրագծերը և 2 փողոցների կոյուղագծերը , որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

6. Կիսամյակի ընթացքում 1 անգամ հրավիրվել են տարբեր մասնագիտությունների բժիշկներ, որոնց կողմից անց է կացվել անվճար բուժ. սպասարկում , որի համար մեր խորին շնորհակալությունը տիկին Լարիսա Մուրադյանին :

7. Ժամանակին սկսվել է ցորենի և գարու ցանքը և բերքահավաքը :

8. Մայիսի 9-ին հաղթանակի օրվա կապակցությամբ պատերազմի վետերաններին և զոհված ազատամարտիկների ընտանիքների համար կազմակերպվել է տոնական միջոցառում:

9 .Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներին հատկացվել է 1.300.000 դրամի օգնություն :

10. Նոր և վերանորոգված տարածք է հատկացվել փոստի բաժանմունքին:

11.Ընթացքի մեջ է մշակույթի տան ջեռուցման աշխատանքները :

12.Ընթացքի մեջ է դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատման խնդիրը :

13. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնորոգման հարցը :

14. Առայժմ չի լուծվել , բայց ընթացքի մեջ է համայքնի երկու հարկանի վթարային շենքի բնակիչների փոխհատուցման հարցը:

ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ